



**Армянский Колледж**  
+7 904 506 91 28

**Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ**

**Частные уроки армянского языка  
тел. 8 904 509 68 76**

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԿՐԱԿԸ



Հունվարի 4-ին Մ. Գորկու անվան ակադեմիական – դրամատիկական թատրոնում տոն էր և խնդություն: Ամանորյա տոնի գունագեղությամբ և խորհուրդով ներկայացնում էին Հանս Քրիստիան Անդերսենի «Լուցկիներով աղջիկը» հեքիաթի հիման վրա երաժշտական բեմադրություն «Волшебный огонь Рождества» վերնագրով:

Հայկական համայնքը գիտի դոնահայերին ուրախացնելու, միավորելու իր գաղտնիքները: Դոնահայերի ուրախության առիթներից մեկը ներկայացմանը մասնակցելն էր: Թատրոնի հյուրերն էին դոնահայ համայնքի շատ երեխաներ և ընտանիքներ, որոնց ներկայացման տոմսեր էր նվիրել համայնքը:

Բարձր ու գեղեցիկ տոնածառի մոտ, որի կանաչ ճյուղերին առկայծող լույսեր էին վառվում, երգու պարով, բարի ողջույններով երեխաներին դիմավորեցին Ձմեռ պապն ու Չլունանուշը, հեքիաթների հերոսները: Ամենահիանալին բեմադրվող ներկայացումն էր, որ շղարշի պես

թափանցիկ դարձրեց հանդիսականներին: Հեքիաթի հերոսուհուն անօգնական աղջկա վառած լուցկիները երեկոյան այնքան շացուցիչ բռնկվեցին, որ շրջակայքը ցերեկվանից էլ լուսավոր դարձավ, բուժեց սիրելի տատիկին: Հերոսներն իրենց ողջ կյանքում չէին եղել այնքան գեղեցիկ և վեհաշուք: Լույսի և ուրախության ցուլի մեջ նրանք բարձրացան վերև այնտեղ, որտեղ ոչ սով կա, ոչ ցուրտ, ոչ վախ: Նրանց իրեշտակները բարձրացրին այնտեղ, որտեղ Աստված է: Բոլորը լցվեցին մեծ ուրախությամբ, բանի որ երջանիկ ժլատուն էին մանուկները, ապրում և հաղորդակցվում գեղարվեստական հույզերին, զգում հեքիաթի խորհուրդը և հավատում, որ կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգտում և նպատակ, որ բարին հաղթում է չարին:

Երեխաների ուրախությունը կրկնապատվեց վերջում, երբ համայնքի կողմից նվերներ ստացան:

Մելանյա Գալոյան

## ԱՄՓՈՓԵՆՔ ԱՆՑՆՈՂ ՏԱՐԻՆ

Տարեմուտի նախօրյակին ընդունված է ամփոփել, գնահատել և բոլոր առումներով արժևորել անցած տարին: Մարդկանց մեծ մասն անում է դա լուռ, ինքն իր մեջ: Մի մասն էլ բարձրաձայնում է, հատկապես ձեռքբերումներն ու արձանագրում հաջողությունները:

Տարին ընդհանուր առմամբ այնքան էլ վատ չէր, եթե հաշվի չառնենք վերջին օրերի դրամադրարային կտրուկ տատանումները, ապա պիտի արձանագրենք, որ ամեն ինչ ընթացում է նախանշված սցենարով: Չնայած գներն անշեղորեն բանկանում են, մարդկանց եկամուտները նվազում, սակայն առանձնապես մեծ դժգոհություններ չկան: Մարդիկ արդեն հարմարվել են այդ անենին և եթե կտրուկ ու հանկարծակի չեն լինում անկումները, լուռ դիմանում են, հարմարվում: Ովքեր էլ նեղվում են, ոչ մի խնդիր չկա, հայրենի իշխանությունների սիրահոժար թողություններ և մեր անհագ սիրուց տառալող հոգրների բարի կամեցողությամբ մեզ համար բաց են բոլոր դռները երբ, որ երկիր և որքան ժամանակով ուզում են գնա: Սա Հայաստանին է վերաբերվում: Միայն հարցը թերևս կարգավիճակի խնդիրն է, այն էլ գնալով հանգիստ կարգավիճակում է: Ուզում են մեկ, հինգ կամ տաս տարով, ուզում են ընդմիջ: Եթե անհրաժեշտ է միանգամից քաղաքացու կարգավիճակով...:

Աշխարհում երկրներ կան, որտեղ ավելի շատ հայեր են ապրում, քան Հայաստանում: Օրինակ Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ: Իսկ ավելի կոնկրետ այսօր Հայաստանում է բնակվում յուրաքանչյուր չորրորդ կամ ինգերորդ հայը: Կարծում եք սա նորմալ չէ: Իհարկե նորմալ է, իսկ մնացյալը հնացած մոտեցումներ են: Այսօր մայրենիին չի տիրապետում աշխարհասփյուռ հայության կեսից ավելին: Խնդիր չկա, բայց չէ որ նրանց մեծ մասը ռուսերեն կամ անգլերեն գիտի և ավելի շահեկան վիճակում է մոլորակի որ անկյունում էլ գտնվի չի նեղվի: Էլ չեն ասում կրթության, լավ մասնագետ դառնալու, կարիերա անելու, շահավետ ամուսնության և այլ հարցերի մասին: Ով չգիտի, որ հենց ՀՀ-ում ավելի բարեհամբույր վերաբերմունքի են արժանանում ու պաշտոնական սանդղակով վերելակային քայլերով են առաջ գնում «դըրսուն» ավարտած երիտասարդները:

Շուրջ երկու դար առաջ, երբ երկար մաքառումներից հետո վերջապես գերմանական բոլոր հողերը միավորվեցին և այդ կապակցությամբ մեծ տոնախմբություն էր կազմակերպվել, երկրի ղեկավար կանցները բաժակ բարձրացրեց կենաց ասելու: Բոլորն սպասում էին, որ նա այն կնվիրի միավորման համար մղված կռիվներում հերոսացած գեներալներին: Սակայն մեծ եղավ բոլորի գարնանքն ու հիասթափությունը, երբ ականջալուր եղան, որ կենացը նվիրված էր հասարակ գյուղական մանկավարժին, ումից սկսվել էր երկրի միավորման գործընթացը: Կարծում են, որ գալիք տարում մենք էլ այնքան խոհեմություն կունենանք և կգնահատենք բոլոր արժանավորներին: Անկասկած չպետք է մոռա-

նանք, որ մեր կրիվը շարունակվում է և զգալի զոհեր ունեցանք, ինչը ամեն գնով պետք է բացառենք գալիք տարում:

Գալիք տարին 2015-ը հայերիս համար կարևոր ու վճռական է: Լրանում է Մեծ եղեռնի Հայոց ցեղասպանության, գեոցիդների մեջ ամենագեոցիդային արմենցիդի 100-ամյա տարելիցը: Ամենակարևոր ձեռքբերումն իմ կարծիքով այն է, որ տասնամյակներ շարունակ անպտուղ դեգերումներից հետո վերջապես հանգեցինք ճշմարիտ եզրույթին պահանջատիրությանն ու հատուցման խնդրին: Չգալի տեղաշարժեր իհարկե կլինեն, սակայն հարկավոր է իրատես լինել և ավելի համախմբված և միակամ շարունակել պայքարն այդ ուղղությամբ: Կիսում են բոլոր այն տեսակետները, որ ազգովի պիտի համախմբվենք և շարունակենք արդարության հասնելու համար պայքարել, սակայն ավելի սառը, սթափ գնահատենք յուրաքանչյուր քայլ, չնոռանանք, որ այլևս սխալվելու հնարավորություններ չունենք:

Ուզում են մշել, որ տարին հորեյանական է մի քանի առումներով: Առաջին հերթին հայ քաղաքական կյանքի պատմության կրողը վաճճով 130 տարի առաջ Վանում ծնունդ առավ հայ անդրամիկ և միակ երկրաժին Արմենական կուսակցությունը: Քաղաքական կազմակերպություն, ով բարձրաձայնեց թուրքական այլևս անտանելի դարձած բռնատիրության ազգային, կրոնական, իրավական, տնտեսական վայրագությունների, հայության ազատ ու մարդավայել պայմաններում ապրելու անհրաժեշտության մասին:

Հայ քաղաքական մամուլի առաջնել «Արմենիա» թերթը նույնպես գալիք տարում կդառնա 130 տարեկան: Սփյուռքահայ մեկ այլ պարբերական էլ եգիպտոսում ցայսօր իրատարակվող «Արևը» կդառնա 100 տարեկան:

Տարին հորեյանական է նաև այն առումով, որ լրանում է Հայրենական մեծ պատերազմում խՍՀՄ ժողովրդի շարքում հերոսաբար կռված, հայրենի տունն ու պատիվը քաջաբար պաշտպանած հայ զինվորի հաղթանակի 70-ամյակը: Անհրաժեշտ է օգտագործել այս հորեյանները և մատաղ սերնդին դաստիարակել ճշմարտացի հայրենասիրությամբ, նրան նյութապաշտական, սերիալառաբիսային հարթությունից տեղափոխել իրականությանը, հայրենաշինության կառուցման ոլորտ:

Հորեյաններն իսկապես շատ են գալիք տարում: Ձեռնպահ մնալով դրանց թվարկումից ուզում են հավատալ, որ դրանք ոչ միայն ըստ արժանվույն կգնահատվեն ու անդրադարձներ կունենան, այլև կնպաստեն ավելի հարգվից վերաբերվել անցյալին, դասեր քաղել և ավելի վստահ, համարձակ, ինքնուրույն ու գիտակից քայլերով առաջ շարժվել: Համոզված են ապագան մերն է լինելու:

Եվս մեկ անգամ շնորհավորում են բոլորիս Ամանորը և մաղթում խաղաղություն, նոր նվաճումներ, ստեղծագործական ճախրանք, արդարության հաղթանակ:

Արմինե Հովսեփյան

## Новогоднее чудо в армянской воскресной школе Новочеркаска



28 декабря в музыкальной школе города Новочеркаска ученики Армянской воскресной школы по инициативе и под руководством Вардана Минасяна отпраздновали наступающий Новый год!!! Несмотря на то что школа открылась совсем недавно, 21 сентября 2014г., организаторам удалось собрать немало представителей не только армянского народа и друзей армянского народа.

На этом празднике талантливые ученики школы танцевали, пели, рассказывали стихи, разыграли новогоднюю сценку на армянском. И это притом, что многие из них только начинают учить родной язык. Дети порадовали гостей и зажигательным танцем кочари, который, кстати, они разучили именно в стенах армянской вечерней школы. Именно здесь старшее поколение делится опытом и знаниями и своими поступками служит примером для молодежи.

На утреннике присутствовал и большой друг школы – Генеральный консул Республики Армения в Южном федеральном округе РФ Арарат Гомцян.

Основатель школы Вардан Минасян наградил учеников и друзей армянской воскресной школы грамотами, а также раздал подарки от Деда Мороза – продукцию «Вардани мот от Мартина», Арарат Двинович подарил книги школе, председатель РОО «Центр социальных инициатив» Поволоцкая Марина пришла на праздник не с пустыми руками – принесла новогодние подарки детям.

Фотографии и видео с праздника можно посмотреть на страницах армянской воскресной школы в социальных сетях: <http://vk.com/public79348251>; <http://www.ok.ru/profile/567598628079>;

Карине Минасян